



**1. Ֆիզիկական անձանց համար նախատեսված սակագնային փաթեթի փոփոխություններ**

**1.1. Անցում որևէ Առանձին Ծառայությունից/Ծառայությունների փաթեթից մեկ այլ Առանձին Ծառայության/Ծառայությունների փաթեթի**

**1.1.1. Անցում անժամկետ Առանձին Ծառայությունից կամ Ծառայությունների փաթեթից մեկ այլ անժամկետ Առանձին Ծառայության կամ Ծառայությունների փաթեթի:**

Հնարավոր է առանց սահմանափակումների իրականացնել որևէ անժամկետ Առանձին Ծառայության կամ Ծառայությունների փաթեթի փոփոխություն՝ անցում կատարելով անժամկետ մեկ այլ Առանձին Ծառայության կամ Ծառայությունների փաթեթի: Տվյալ դեպքում նոր Առանձին ծառայության կամ Ծառայությունների փաթեթի ակտիվացման պահից սկսած՝ Բաժանորդի մոտ դադարում են գործել նախկին Առանձին ծառայության կամ Ծառայությունների փաթեթի պայմանները և կիրառվում են նոր Առանձին ծառայության կամ Ծառայությունների փաթեթի պայմանները:

**1.1.2. Անցում անժամկետ Առանձին Ծառայությունից կամ Ծառայությունների փաթեթից մեկ այլ ժամկետային պայմանագրով Առանձին Ծառայության կամ Ծառայությունների փաթեթի:**

Հնարավոր է իրականացնել որևէ անժամկետ Առանձին Ծառայության կամ Ծառայությունների փաթեթի փոփոխություն՝ անցում կատարելով ժամկետային պայմանագրով մեկ այլ Առանձին Ծառայության կամ Ծառայությունների փաթեթի: Տվյալ դեպքում նոր Առանձին Ծառայության կամ Ծառայությունների փաթեթի ակտիվացման պահից սկսած՝ Բաժանորդի համար դադարում են գործել նախկին Առանձին ծառայության կամ Ծառայությունների փաթեթի պայմանները և կիրառվում են նոր՝ ժամկետային պայմանագրով Առանձին Ծառայության կամ Ծառայությունների փաթեթի պայմանները: Բաժանորդը պարտավորվում է նոր Առանձին ծառայության կամ Ծառայությունների փաթեթի ակտիվացման պահից սկսած՝ օգտվել Ծառայություններից առնվազն մինչև տվյալ ժամկետային պայմանագրով սահմանված պարտադիր բաժանորդագրության վերջնաժամկետի ավարտը:

**1.1.3.**

**ա. Անցում ժամկետային պայմանագրով Ծառայությունների փաթեթից մեկ այլ ժամկետային պայմանագրով Ծառայությունների փաթեթի**

Հնարավոր է իրականացնել ժամկետային պայմանագրով որևէ Ծառայությունների փաթեթի փոփոխություն՝ անցում կատարելով ժամկետային պայմանագրով մեկ այլ Ծառայությունների փաթեթի: Տվյալ դեպքում բաժանորդագրության պարտադիր ժամկետը չի երկարաձգվում նոր Ծառայությունների փաթեթով սահմանված պարտադիր ժամկետի չափով, այլ պահպանվում է

նախկին Ծառայությունների փաթեթի ժամկետային պայմանագրի պայմաններով սահմանված պարտադիր բաժանորդագրության ժամկետը: Եթե Բաժանորդը սույն կետում նշված կարգով Ծառայությունների փաթեթի փոփոխությանը զուգահեռ նաև միանում է «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ կողմից մատուցվող կամ «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ և «ՀԻԲԲԻԴ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՍՊԸ կողմից համատեղ մատուցվող որևէ հատուկ առաջարկի, որի պայմաններով նախատեսված է գործող ժամկետային պայմանագրի վերակնքում, ապա գործող ժամկետային պայմանագրի ժամկետը վերակնքվում է/երկարաձգվում է տվյալ հատուկ առաջարկի պայմաններով սահմանված պարտադիր բաժանորդագրության ժամկետով:

Եթե սույն կետում նշված կարգով Ծառայությունների փաթեթի փոփոխությունը կամ որևէ հատուկ առաջարկի շրջանակում պայմանագրի վերակնքումը կատարվում է՝ անցում կատարելով ավելի ցածր ամսավճարով սակագնային փաթեթի, ապա յուրաքանչյուր անցման կամ պայմանագրի վերակնքման համար գանձվում է 2000 դրամ (ներառյալ ԱԱՀ) անցման տուգանք:

**բ. Անցում ժամկետային պայմանագրով Ծառայությունների փաթեթից ժամկետային պայմանագրով որևէ Առանձին Ծառայության**

Հնարավոր է իրականացնել ժամկետային պայմանագրով որևէ Ծառայությունների փաթեթի փոփոխություն՝ անցում կատարելով ժամկետային պայմանագրով և տվյալ Ծառայությունների փաթեթի բաղադրիչ հանդիսացող որևէ Առանձին Ծառայության: Տվյալ դեպքում բաժանորդագրության պարտադիր ժամկետը երկարաձգվում է (պայմանագիրը վերակնքվում է), և Բաժանորդը պարտավորվում է նոր Առանձին Ծառայության ակտիվացման պահից սկսած՝ օգտվել Ծառայություններից մինչև տվյալ Առանձին Ծառայությամբ սահմանված պարտադիր բաժանորդագրության ժամկետի ավարտը: Եթե Բաժանորդը սույն կետում նշված կարգով Ծառայությունների փաթեթի փոփոխությանը զուգահեռ նաև միանում է «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ կողմից մատուցվող կամ «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ և «ՀԻԲԲԻԴ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՍՊԸ կողմից համատեղ մատուցվող որևէ հատուկ առաջարկի, որի պայմաններով նախատեսված է գործող ժամկետային պայմանագրի վերակնքում, ապա տվյալ դեպքում նույնպես գործող ժամկետային պայմանագրի ժամկետը վերակնքվում է/երկարաձգվում է տվյալ հատուկ առաջարկի պայմաններով սահմանված պարտադիր բաժանորդագրության ժամկետով: Սույն կետում նշված կարգով յուրաքանչյուր անցման կամ որևէ հատուկ առաջարկի շրջանակում պայմանագրի վերակնքման դեպքում Օպերատորի կողմից գանձվում է 4000 դրամ (ներառյալ ԱԱՀ) անցման տուգանք:

Բաժանորդն իր նախընտրությամբ և ի լրումն նոր ժամկետային պայմանագրով առանձին Ծառայության՝ կարող է շարունակել օգտվել նախկին Ծառայությունների փաթեթի բաղադրիչ հանդիսացող մեկ այլ անժամկետ առանձին Ծառայությունից՝ առանց պարտադիր բաժանորդագրության պայմանի:

**գ. Անցում ժամկետային պայմանագրով Առանձին Ծառայությունից ժամկետային պայմանագրով որևէ Ծառայությունների փաթեթի**

Հնարավոր է իրականացնել ժամկետային պայմանագրով որևէ Առանձին Ծառայության փոփոխություն՝ անցում կատարելով ժամկետային պայմանագրով որևէ Ծառայությունների փաթեթի,

որի բաղադրիչներից մեկը հանդիսանում է տվյալ առանձին Ծառայությունը: Տվյալ դեպքում բաժանորդագրության պարտադիր ժամկետը չի երկարաձգվում նոր Ծառայությունների փաթեթով սահմանված պարտադիր ժամկետի չափով, այլ պահպանվում է նախկին Առանձին Ծառայության ժամկետային պայմանագրի պայմաններով սահմանված պարտադիր բաժանորդագրության ժամկետը: Եթե Բաժանորդը սույն կետում նշված կարգով Ծառայության փոփոխությանը զուգահեռ նաև միանում է «ՋԻԷՆՄԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ կողմից մատուցվող կամ «ՋԻԷՆՄԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ և «ՀԻԲԲԻԴ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՍՊԸ կողմից համատեղ մատուցվող որևէ հատուկ առաջարկի, որի պայմաններով նախատեսված է գործող ժամկետային պայմանագրի վերակնքում, ապա տվյալ դեպքում նույնպես գործող ժամկետային պայմանագրի ժամկետը վերակնքվում է/երկարաձգվում է տվյալ հատուկ առաջարկի պայմաններով սահմանված պարտադիր բաժանորդագրության ժամկետով: Սույն կետում նշված կարգով անցման դեպքում չի գանձվում որևէ անցման տուգանք:

**1.1.4. Անցում ժամկետային պայմանագրով Առանձին Ծառայությունից կամ Ծառայությունների փաթեթից մեկ այլ անժամկետ Առանձին Ծառայության կամ Ծառայությունների փաթեթի:**

Հնարավոր է իրականացնել ժամկետային պայմանագրով որևէ Առանձին Ծառայության կամ Ծառայությունների փաթեթի փոփոխություն՝ անցում կատարելով անժամկետ մեկ այլ Առանձին Ծառայության կամ Ծառայությունների փաթեթի: Տվյալ դեպքում նոր Առանձին Ծառայության կամ Ծառայությունների փաթեթի ակտիվացման պահից սկսած՝ Բաժանորդի համար դադարում են գործել նախկին Առանձին ծառայության կամ Ծառայությունների փաթեթի պայմանները և կիրառվում են նոր՝ անժամկետ Առանձին Ծառայության կամ Ծառայությունների փաթեթի պայմանները: Բաժանորդը պարտավորվում է վճարել նախկին Առանձին Ծառայության կամ Ծառայությունների փաթեթի շրջանակում կնքված ժամկետային պայմանագրի վաղաժամ դադարեցման դեպքում սահմանված տուգանքը մինչև Հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 15-ը ներառյալ և շարունակում է օգտվել Առանձին Ծառայությունից/Ծառայությունների փաթեթից՝ առանց պարտադիր ժամկետային բաժանորդագրության պայմանի:

**1.2. Սակագնային փաթեթի փոփոխություն մինևույն Ծառայության/Ծառայությունների փաթեթի շրջանակում**

**1.2.1. Անցում անժամկետ սակագնային փաթեթից/սակագնից մեկ այլ անժամկետ սակագնային փաթեթի/սակագնի**

Հնարավոր է առանց սահմանափակումների իրականացնել անժամկետ սակագնային փաթեթի/սակագնի փոփոխություն՝ մինևույն Ծառայության/Ծառայությունների փաթեթի ներսում անցում կատարելով անժամկետ մեկ այլ սակագնային փաթեթի/սակագնի: Տվյալ դեպքում նոր սակագնային փաթեթի/սակագնի ակտիվացման պահից սկսած՝ Բաժանորդի համար դադարում են գործել նախկին սակագնային փաթեթի/սակագնի պայմանները և կիրառվում են նոր սակագնային փաթեթի/սակագնի պայմանները:

**1.2.2. Անցում անժամկետ սակագնային փաթեթից/սակագնից մեկ այլ ժամկետային պայմանագրով սակագնային փաթեթի/սակագնի**

Հնարավոր է իրականացնել որևէ անժամկետ սակագնային փաթեթի/սակագնի փոփոխություն՝ միննույն Ծառայության/Ծառայությունների փաթեթի ներսում անցում կատարելով ժամկետային պայմանագրով մեկ այլ սակագնային փաթեթի/սակագնի: Տվյալ դեպքում նոր սակագնային փաթեթի/սակագնի ակտիվացման պահից սկսած՝ Բաժանորդի համար դադարում են գործել նախկին սակագնային փաթեթի/սակագնի պայմանները և կիրառվում են նոր՝ ժամկետային պայմանագրով սակագնային փաթեթի/սակագնի պայմանները: Բաժանորդը պարտավորվում է նոր սակագնային փաթեթի/սակագնի ակտիվացման պահից սկսած՝ օգտվել Ծառայություններից առնվազն մինչև տվյալ ժամկետային պայմանագրով սահմանված պարտադիր բաժանորդագրության վերջնաժամկետի ավարտը:

### **1.2.3. Անցում ժամկետային պայմանագրով սակագնային փաթեթից/սակագնից մեկ այլ ժամկետային պայմանագրով սակագնային փաթեթի/սակագնի**

Հնարավոր է իրականացնել ժամկետային պայմանագրով որևէ սակագնային փաթեթի/սակագնի փոփոխություն՝ միննույն Ծառայության/Ծառայությունների փաթեթի ներսում անցում կատարելով ժամկետային պայմանագրով մեկ այլ սակագնային փաթեթի/սակագնի: Տվյալ դեպքում բաժանորդագրության պարտադիր ժամկետը չի երկարաձգվում նոր սակագնային փաթեթով/սակագնով սահմանված պարտադիր ժամկետի չափով, այլ պահպանվում է գործող սակագնային փաթեթի/սակագնի ժամկետային պայմանագրի պայմաններով սահմանված պարտադիր բաժանորդագրության ժամկետը: Եթե Բաժանորդը սույն կետում նշված կարգով սակագնային փաթեթի/սակագնի փոփոխությանը զուգահեռ նաև միանում է «ՋԻԷՆՄԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ կողմից մատուցվող կամ «ՋԻԷՆՄԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ և «ՀԻԲԲԻԴ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՍՊԸ կողմից համատեղ մատուցվող որևէ հատուկ առաջարկի, որի պայմաններով նախատեսված է գործող ժամկետային պայմանագրի վերակնքում, ապա տվյալ դեպքում գործող ժամկետային պայմանագրի ժամկետը վերակնքվում է/երկարաձգվում է տվյալ հատուկ առաջարկի պայմաններով սահմանված պարտադիր բաժանորդագրության ժամկետով:

Եթե սույն կետում նշված կարգով սակագնային փաթեթի փոփոխությունը կամ որևէ հատուկ առաջարկի շրջանակում պայմանագրի վերակնքումը կատարվում է՝ անցում կատարելով ավելի ցածր ամսավճարով սակագնային փաթեթի, ապա յուրաքանչյուր անցման կամ պայմանագրի վերակնքման համար գանձվում է 2000 դրամ (ներառյալ ԱԱՀ) անցման տուգանք:

### **1.2.4. Անցում ժամկետային պայմանագրով սակագնային փաթեթից/սակագնից մեկ այլ անժամկետ սակագնային փաթեթի/սակագնի:**

Հնարավոր է իրականացնել ժամկետային պայմանագրով որևէ սակագնային փաթեթի/սակագնի փոփոխություն՝ միննույն Ծառայության/Ծառայությունների փաթեթի ներսում անցում կատարելով անժամկետ մեկ այլ սակագնային փաթեթի/սակագնի: Տվյալ դեպքում նոր սակագնային փաթեթի/սակագնի ակտիվացման պահից սկսած՝ Բաժանորդի համար դադարում են գործել նախկին սակագնային փաթեթի/սակագնի պայմանները և կիրառվում են նոր՝ անժամկետ սակագնային փաթեթի/սակագնի պայմանները: Բաժանորդը պարտավորվում է վճարել նախկին սակագնային փաթեթի/սակագնի շրջանակում կնքված ժամկետային պայմանագրի վաղաժամ դադարեցման դեպքում սահմանված տուգանքը մինչև Հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 15-ը

ներառյալ, և շարունակում է օգտվել նոր սակագնային փաթեթից/սակագնից՝ առանց պարտադիր ժամկետային բաժանորդագրության պայմանի:

## 2. Իրավաբանական անձանց համար նախատեսված սակագնային փաթեթի փոփոխություններ

ա) Հնարավոր է առանց սահմանափակումների իրականացնել սակագնային փաթեթի փոփոխություն՝ անցում կատարելով **«Սմարթ Օֆիս»** սակագնային փաթեթի սակագների միջև:

բ) Հնարավոր է առանց սահմանափակումների իրականացնել սակագնային փաթեթի փոփոխություն՝ անցում կատարելով **«Կորպ»** սակագնային փաթեթում ներառված սակագների միջև:

գ) Հնարավոր է առանց սահմանափակումների իրականացնել սակագնային փաթեթի փոփոխություն՝ անցում կատարելով **«Ֆիքսլայն Օֆիս»** սակագնային փաթեթում ներառված սակագների միջև:

դ) Հնարավոր է առանց սահմանափակումների իրականացնել **«Ռինտերնետ օֆիս»** անժամկետ սակագնային փաթեթի գործող սակագնի փոփոխություն՝ անցում կատարելով **«Ռինտերնետ օֆիս»** անժամկետ սակագնային փաթեթի մեկ այլ սակագնի:

ե) Հնարավոր է իրականացնել **«Ռինտերնետ օֆիս»** անժամկետ սակագնային փաթեթի որևէ սակագնի փոփոխություն՝ անցում կատարելով **«Ռինտերնետ օֆիս»** սակագնային փաթեթի մեկ այլ սակագնի՝ մեկ տարի պարտադիր բաժանորդագրության պայմանով: Տվյալ դեպքում Բաժանորդի վրա տարածվում են **«Ռինտերնետ օֆիս»** սակագնային փաթեթին 1 տարով բաժանորդագրության բոլոր պայմանները:

զ) Հնարավոր է իրականացնել մեկ տարի պարտադիր բաժանորդագրությամբ **«Ռինտերնետ օֆիս»** սակագնային փաթեթի գործող սակագնի փոփոխություն՝ անցում կատարելով **«Ռինտերնետ օֆիս»** սակագնային փաթեթի մեկ այլ սակագնի՝ ժամկետային պայմանագիրը չդադարեցնելու պայմանով:

**«Ռինտերնետ օֆիս»** սակագնային փաթեթի Բաժանորդները բաժանորդագրության պարտադիր ժամկետի ընթացքում հնարավորություն ունեն սույն կետում նշված կարգով փոխել ընթացիկ սակագինը՝ անցում կատարելով **«Ռինտերնետ օֆիս»** սակագնային փաթեթի միայն ավելի բարձր ամսավճարով սակագնի:

Նոր սակագնին անցումը չի երկարացնում **«Ռինտերնետ օֆիս»** սակագնային փաթեթի պայմաններով սահմանված պարտադիր բաժանորդագրության ժամկետը:

**«Ռինտերնետ օֆիս»** սակագնային փաթեթին բաժանորդագրության պարտադիր ժամկետի ավարտից հետո Բաժանորդները հնարավորություն են ստանում փոխելու ընթացիկ սակագինը՝ անցում կատարելով **«Ռինտերնետ օֆիս»** սակագնային փաթեթի թե՛ ավելի բարձր, թե՛ ավելի ցածր ամսավճարով սակագնի:

է) Հնարավոր է իրականացնել մեկ տարի պարտադիր բաժանորդագրությամբ **«Ռինտերնետ օֆիս»** սակագնային փաթեթի գործող սակագնի փոփոխություն՝ անցում կատարելով **«Ռինտերնետ օֆիս»** սակագնային փաթեթի մեկ այլ սակագնի՝ ժամկետային պայմանագիրը դադարեցնելու պայմանով: Եթե սույն կետում սահմանված կերպով սակագնային փաթեթի փոփոխությունը կատարվում է մինչև սակագնային փաթեթի պայմաններով նախատեսված պարտադիր բաժանորդագրության ժամկետի

ավարտը, ապա գործարքն իրականացվում է «Ռինտերնետ օֆիս» սակագնային փաթեթի վաղաժամ դադարեցման պայմանով, և այն իրականացվում է միայն «Ռինտերնետ օֆիս» սակագնային փաթեթի վաղաժամ դադարեցման դեպքում սահմանված տուգանքների վճարումից հետո:

**3. Հավելյալ ծառայությունների փոխանցման պայմանները սակագնային փաթեթի փոփոխության ժամանակ**

Կատարելով անցում որևէ Ծառայությունից/Ծառայությունների փաթեթից մեկ այլ Ծառայության/Ծառայությունների փաթեթի կամ կնքելով/վերակնքելով ժամկետային պայմանագիր(ը) մեկ այլ Ծառայության/Ծառայությունների փաթեթի շրջանակում՝ նախկին Ծառայության/Ծառայությունների փաթեթի շրջանակում ակտիվացված հավելյալ ծառայությունները շարունակում են գործել նոր Ծառայության/Ծառայությունների փաթեթի կազմում (եթե նոր Ծառայության/Ծառայությունների փաթեթի շրջանակում նախատեսված է տվյալ հավելյալ ծառայության տրամադրումը) յուրաքանչյուր հավելյալ ծառայության համար նոր Ծառայության/Ծառայությունների փաթեթի շրջանակում սահմանված վճարով: Բացառություն են կազմում «Մուլտիբրոմ» (ներառյալ «Մուլտիբրոմ» ծառայության մաս հանդիսացող «Հավելյալ սմարթ սարք» ծառայությունը) և «SmartBox Wi-Fi» ծառայությունները, որոնք դադարում են գործել և նոր Ծառայության/Ծառայությունների փաթեթի շրջանակում կարող են ակտիվանալ Բաժանորդի ընտրությամբ:

Մինևույն Ծառայության/Ծառայությունների փաթեթի ներսում կատարելով անցում որևէ սակագնային փաթեթից/սակագնից մեկ այլ սակագնային փաթեթի/սակագնի կամ կնքելով/վերակնքելով ժամկետային պայմանագիր(ը) մեկ այլ սակագնային փաթեթի/սակագնի շրջանակում՝ նախկին սակագնային փաթեթի/սակագնի շրջանակում ակտիվացված հավելյալ ծառայությունները շարունակում են գործել նոր սակագնային փաթեթի/սակագնի կազմում (եթե նոր սակագնային փաթեթի/սակագնի շրջանակում նախատեսված է տվյալ հավելյալ ծառայության տրամադրումը) յուրաքանչյուր հավելյալ ծառայության համար նոր սակագնային փաթեթի/սակագնի շրջանակում սահմանված վճարով: Տվյալ դեպքում եթե Բաժանորդը նոր սակագնային փաթեթի/սակագնի կազմում չի ցանկանում օգտվել որևէ հավելյալ ծառայությունից, ապա նոր սակագնային փաթեթի/սակագնի անցնելուց հետո կարող է դադարեցնել տվյալ հավելյալ ծառայությունը:

Եթե հավելյալ ծառայությունները տրամադրվել են հատուկ պայմաններով և որևէ հատուկ առաջարկի շրջանակում, ապա կատարելով սակագնային փաթեթի/սակագնի փոփոխություն կամ կնքելով/վերակնքելով ժամկետային պայմանագիր(ը) մինևույն Ծառայության/Ծառայությունների փաթեթի ներսում կամ մեկ այլ Ծառայության/Ծառայությունների փաթեթի շրջանակում, վերը նշված հավելյալ ծառայությունների փոխանցման պայմանները սահմանվում են այն հատուկ առաջարկի պայմաններով, որի շրջանակում դրանք տրամադրվել են:

**4. Միանվագ վճարների փոխանցման պայմանները սակագնային փաթեթի փոփոխության ժամանակ**

Եթե Բաժանորդը անցում է կատարում Սմարթ հեռուստատեսության Ծառայությունը չպարունակող որևէ Ծառայությունից/Ծառայությունների փաթեթից «Սմարթ» սակագնային փաթեթի որևէ սակագնի, ապա նոր սակագնային փաթեթի շրջանակում գանձվում է տվյալ սակագնային փաթեթին միանալու դեպքում սահմանված միանվագ վճար:

Եթե Բաժանորդը անցում է կատարում Ֆիքսված հեռախոսակապի Ծառայությունը չպարունակող որևէ Ծառայությունից/Ծառայությունների փաթեթից «Ֆիքսվայն» սակագնային փաթեթի որևէ սակագնի, ապա նոր սակագնային փաթեթի շրջանակում գանձվում է տվյալ սակագնային փաթեթին միանալու դեպքում սահմանված միանվագ վճար:

Բոլոր այլ տեսակի սակագնային փաթեթի/Ծառայության փոփոխությունների դեպքում չի գանձվում միանվագ վճար:

## **5. Wi-Fi ծառայության փոխանցման պայմանները սակագնային փաթեթի փոփոխության ժամանակ**

**5.1.** Եթե Բաժանորդը կատարում է սակագնային փաթեթի/Ծառայության փոփոխություն և գործող սակագնային փաթեթի/Ծառայության շրջանակում արդեն իսկ օգտվում է Wi-Fi ծառայությունից, ապա նոր սակագնային փաթեթի/Ծառայության շրջանակում շարունակում է օգտվել Wi-Fi ծառայությունից (եթե նոր Ծառայությունը կարող է մատուցվել նաև Wi-Fi տարբերակով) առանց վճարի գանձման:

**5.2.** Եթե Բաժանորդը կատարում է սակագնային փաթեթի/Ծառայության փոփոխություն և գործող սակագնային փաթեթի/Ծառայության շրջանակում չի օգտվում Wi-Fi ծառայությունից, ապա նոր սակագնային փաթեթի/Ծառայության շրջանակում անվճար չի ստանում Wi-Fi ծառայություն: Բացառություն է կազմում որևէ անժամկետ սակագնային փաթեթից/Ծառայությունից մեկ այլ ժամկետային պայմանագրով սակագնային փաթեթի/Ծառայության անցումը, կամ մեկ այլ սակագնային փաթեթի/Ծառայության շրջանակում ժամկետային պայմանագրի վերակնքումը, որի դեպքում Wi-Fi ծառայությունը տրամադրվում է առանց վճարի գանձման:

## **6. Այլ պայմաններ**

**6.1.** Բաժանորդը կարող է վերակնքել (երկարաձգել) գործող ժամկետային պայմանագիրը միննույն սակագնային փաթեթի/սակագնի կամ մեկ այլ սակագնային փաթեթի/սակագնի շրջանակում: Տվյալ դեպքում դադարում են գործել նախկին ժամկետային պայմանագրի շրջանակում տրամադրված հատուկ պայմանները(եթե կան նման պայմաններ) և կիրառվում են տվյալ ամսաթվի դրությամբ ժամկետային պայմանագրով միանալու դեպքում գործող հատուկ առաջարկի պայմանները, ինչպես նաև Բաժանորդը չի վճարում գործող ժամկետային պայմանագրի վաղաժամ դադարեցման դեպքում սահմանված տուգանքը:

**6.2.** Դեպի Ֆիքսված հեռախոսակապի Ծառայություն կամ Ֆիքսված հեռախոսակապ պարունակող որևէ Ծառայությունների փաթեթ անցման դեպքում Բաժանորդը նոր սակագնային փաթեթի/Ծառայության շրջանակում շարունակում է օգտվել նախկին սակագնային փաթեթի/Ծառայության շրջանակում իրեն տրամադրված հեռախոսահամարից՝ առանց վճարի գանձման: Եթե Բաժանորդը կատարել է սակագնային փաթեթի փոփոխություն և միննույն ամսվա ընթացքում օգտվել է Ֆիքսված հեռախոսակապի Ծառայության երկու տարբեր սակագներից, ապա անցման պահից սկսած գործող սակագնի շրջանակներում տրամադրվող չօգտագործված ներառված րոպեները զրոյանում են, և

Բաժանորդը ստանում է նոր սակագնի շրջանակներում տրամադրվող ներառված բույեների ամբողջական ծավալ:

**6.3.** Հնարավոր է իրականացնել սակագնային փաթեթի փոփոխություն ժամկետանց պարտքերի բացակայության դեպքում: Եթե Բաժանորդը կատարել է սակագնային փաթեթի փոփոխություն և միևնույն ամսվա ընթացքում օգտվել է երկու տարբեր սակագնային փաթեթներից, ապա տվյալ ամսվա ամսավճարը հաշվարկվում է ըստ օրերի՝ օգտագործած սակագնային փաթեթների ամսավճարների համամասնությամբ:

**7.** Օպերատորի և Բաժանորդի միջև բոլոր այն հարաբերությունները, որոնք կարգավորված չեն սույն պայմաններով, կարգավորվում են Օպերատորի կողմից հրապարակված և Բաժանորդի կողմից ժամկետային պայմանագիրը կնքելու պահին գործող խմբագրությամբ էլեկտրոնային հաղորդակցության և հարակից այլ ծառայությունների մատուցման հիմնական պայմաններով, ինչպես նաև Օպերատորի կողմից հրապարակված ցանկացած այլ պայմաններով, որոնք չեն հակասում սույն պայմաններին:

**8.** Սույն պայմաններում բոլոր հասկացությունները կիրառվում են Օպերատորի կողմից էլեկտրոնային հաղորդակցության և հարակից այլ ծառայությունների մատուցման հիմնական պայմաններով սահմանված իմաստով: